թիւն մի ունի ինքնին, և ինչպէս Անգ-
ղիոյ բարձրագոյն խորհրդարանաց որ-
ձանագրութեանցն և տարեգրութեց,
նոյնպէս և մեր ազգային պատմութե-
մէջ յիշատակութեան արժանի կը հա-
մարի։ Հայ ազգը իւր հոգեւոր իշ-
խանութեան միջոցաւ, բան որում մա-
նով և եթէ ճանչցուած է իբրեւ ազգ
կամ իբրեւ քրիստոնեայ հասարակու-
թիւն, այնպիսի ծառայութիւն մի կը
կատարէ՝ որ թէպէտ և բան ինքեան
և բան մեզ փոքրիկ, այլ բան նպատա-
կին մեծ և վեհ, որովհետեւ մեծ փո-
թորիկ մի կը փարատէ քաղաքական հո-
ւիղանին վերայէն, որ սկսած էր իւր
տարաւնալիքներն ցոյց տալ։ Թէոդորոս
Վ Լեհափառ Կայսեր գաւազանը եթէ
ոչ կորտուեան՝ անշուշտ ջախջախելու վը-
տանգի մէջ կը համարուէր. Անգղիոյ
տէրութիւնը մեծ ծախուց դուռ մի
պիտի բանայր, և երկու կողմէն շատ
արիւնհեղութիւն պիտի ըլլար։ Նպիս-
կոպոս մի և վարդապետ մի Հայրապե-
տական օրհնութեան կնդակ մի և ա-
ղերսանաց թուղթ մի՝ իբրու Հարա-
նի բուրվառն ձեռուընին առած կը
մտնեն մեռելոց և կենդանեաց մէջ
տեղ, առաջնոյն դիւրախորտակելի գա-
ւազանը ի մեռելուս կորտոնէ ազա-
տելու և երկրորդին՝ իւր սուրբ ինեերուն
եւ թնդանօթներուն հարուածները
խեղճ և գթութեան արժանաւոր ան-
ձանց վերայ փորձել չտալու. այլ պա-
հել իւր նիւթական կարողութիւնը
բարոյական վեհանձնութեամբ մի. և
ասով Հայ եկեղեցականութիւնը փա-
ւաւորել ընդհանուր աշխարհիս առ-
ջեւ, և ազգայնոց ամենց ձախող և մե-
ծագոյն կարծիքներն փարատել զոր անի-
բարաբար կը կրեն երկու անշահասէր,
անձնանուէր և անձնուրաց եկեղեցա-
կանաց դէմ, թէ ի պարծանս ընդհա-
նուր Ազգին և թէ ի պատիւ սուրբ
Աթոռոյ և նորա ասպժանելոյ Գա-
հակալին, այս օրինակ փոանդ մի յանձն
առին, ապաւինելով որոց Ամենա-
ջերմեռանդ աղօթիցն և ստուգաձա-
յին ողորմութեան։

Անգղիացի վեհ ազգն և իւր մե-
ծազօր տէրութիւնն այսպիսի զգոյշ-
թեան մի արժէքն լաւ իմանալով, որ-
դէն ամիս մի կայ որ փութացած է իւր
արտաքին պաշտօնեային ձեռօք յայտնել
առ Ամեն. Նոյն Սրբազան Պատրիարք
Հայրն միջոցաւ Կ. Պոլսոյ իւր վեհ-
մափայլ Դեսպանին, որուն իմացնել-
լով Սրբազան Հօր կողմէն Միսն ամ-
սաթերթից ընդունելը, որոյ մէջ էին
առ Հապէշու կայսրն ուղղուած երկու
կնդակաց գաղղիերէն օրինակները,
կը պատուիրէ իւրեան, որ անմիջապէս
հաղորդէ առ Նորին Ամեն. Սրբազ-
նութիւնն Անգղիոյ Տէրութեան և բա-
լոր ազգին շնորհակալութիւնն և խա-
րին զգացմունքը նորա ի գործ դրած
միջոցներուն վերայ, և կը յարէ թէ՝
այն մարդասիրական գործքով ոչ միայն
զԱնգղիա, այլ ընդհանուր մարդկու-
թիւնը պարտաւորած եղաւ։ Այն
խօսքերն մեծ արժէք մի ունին ան-
շուշտ, և առաջին անգամն է զոր Հայ
ազգը կը լսէ փառաւոր և մեծազօր
տէրութեան մի բերանէն ի շնորհս Ամ.
Տէր Նոյնի Սրբազան Պատրիարքի Ս.
Աթոռոյս։

---

Անցեալ օգոստոս ամսոյ Միսնի հրա-
տարակութենէն յետոյ ստացանք նամակ
մի մեր Դահիրէի թղթակցէն, որ հե-
տեւեալ կերպիւ կը պատմէ Ամեն.
Սրբազան Պատրիարք Հօր ի Դահիրէ
մտնելը ի Յարիրդ աւուր օգոստոսի։

Ղէրսանդրիայէն մեկնելու լուրը
Անգիպտոս լսուելով, անմիջապէս հան-
դուսոյ ազգայինք կը փութան երկա-
թուղիով մինչեւ ի կէս ճանապարհը,

digitised by A.R.A.R.@

այսինքն Վեռաֆը—իլ—զէյաթ բառած տեղը յաղարկել ի պատիւ Նորին Ս. Հայրապետութեան՝ զարժանապատիւ տէր Կարապետ քահանայն և զՄնծ. Լաթիֆ էֆէնտին. ուր կէս ժամու չափ տեսութիւն ընելէն և ազգայնոց կողմէն իրենց որդիական յարգութիւնները մատուցանելէն յետոյ, կրկին ի շոգեկառք կը մտնեն, և նոյն օրը ժամ 9 ին խաղաղութեամբ և անվնաս կը հասնին Երկաթուղայն կայարանը։ Հոն կը դիմաւորեն զինքը Ամբ. Մէքայել և Կարապետ վարդապետք, Թաղական խորհրդոյ Մեծ. անդամք և ուրիշ երեւելի անձինք և խուռն բազմութիւն ազգայնոց։ Կառավարութիւնը փութացաւ քառաձի փառաւոր կառք մի յաղարկել և քանէն աւելի ձիաւոր զօրք ի կողմանէ ոստիկանութեան Տեսուչ Տարամանլի Պեյ. Ամենն փաշայեն՝ առաջնորդութեամբ իւր Սուաղլեն Խրիստոս էֆէնտիի։ Նոյնպիսի փառաւոր հանդէսով հասան մինչեւ եկեղեցւոյ փողոցը, ուր կը սպասէին դպրոցի աշակերտք և դասատուք և եկեղեցական մանկունք։ Հոն վար իջնելով կառքին մէջէն Ամեն. Սրբազան Պատրիարքը, և շուրջառաւ, խաչ և գաւազան ի ձեռին՝ եկեղեցական քաղցրաձայն երգերով մտաւ ի սուրբ եկեղեցին՝ ուր ըստ պատշաճի աղօթքն ընելէն յետոյ, անմիջապէս ի սեղան ելնելով հատուցաւ բոյց ներգործիչ առնախօսութեամբ բարեպաշտ ժողովրդոյ ազգասիրական ջանքն ու եռանդը գովելով՝ շնորհակալ եղաւ նոցա ցոյց տուած պատուաւոր ընդունելութենէն, և Խարձրատպատիւ Փոխարքայ Խանցիլ Խրտիվիի կենաց համար բարեմաղթութիւններ ընելէն և զժողովուրդը իւր հայրական օրհնութեամբ օրհնելէն յետոյ, գնաց ուղղակի յառաջնորդարանը. հոն փութացին երեւելի ազգայնք և հասարակ ժողովուրդն ի համբոյր Ամենապատիւ Սրբազան Հօր աջոյն և նորա երջանիկ գալուստը շնորհաւորելու երթալ։

Ուրախ եմք Եգիպտոսի մեր բարեպաշտ և բարեսէր ժողովրդոց առ Հասարակաց Հայրն իւրեանց ցոյց տրուած համակրութեանն և արժանաւոր մեծարանաց վերայ, որով միահամուռ փութացին պատուել զՆորին Սրբազնութիւնը։

— Նոյեմբերի ամսոյս 1 ին Խարձրապատիւ Փոխարքայ Խանցիլ Խրտիվին, որ ինչպէս յայտնի է ի Փարէզ գնացած էր տիեզերական արուեստահանդէսը տեսնելու, և ամէն մի ի վեր ի Կոստանդնուպոլիս կը գտնուէր, ուրբաթ օր կը հասնի Ալէքսանդրիա, և իւր Խասէթթին կոչուած պալատը կ'իջնէ։ Իւր ողջամբ գալուստը թնդանօթներու ձայնով բոլոր հասարակութեան իմաց կը տուի, որոնք կը փութան իւրեանց ուրախութիւնը յայտնել ճրագավառութեան հանդէսներու ակիզբն տալով. տեսնելու արժանի գլխաւոր վայրն և հասարակութեան ուշը գրաւող տեղն էր Մէնշիէ կոչուած պրոսպեքտը, ուր կոթողի ձեւով արձաններ շինուած էին ցեղ ու ցեղ դրօշակներով և լապտերներով զարդարուած։ Տեսնելու արժանի էր նաեւ թէ քաղաքէն և թէ շոգենաւներէն արձակուած գոյնզգոյն փամփուշտներ և այլն։

Ամենապատիւ Սրբազան Պատրիարքը նոյն օրը ժամ 5 ին ու կէսին փութացաւ երթալ առ Խարձրապատիւ Փոխարքայն, իւր խոնարհ յարգանքներն նուիրելու և նորա երջանիկ դարձը շնորհաւորելու։ Ն. Խարձրութիւնը բարեհաճեցաւ արժանաւոր պատուով դիմէն ընդունելով կէս ժամու չափ բաղցրութեամբ հետը խօսակցիլ։

digitised by A.R.A.R.@